ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2013 թվականի N 856-Ն

ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետությունում ստուգում իրականացնող պետական մարմինների տեսչություններում ստեղծել տեսչության կառավարման խորհուրդներ:

2. Հաստատել ստուգում իրականացնող պետական մարմնի տեսչության կառավարման խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) օրինակելի կանոնադրության ձևը՝ համաձայն հավելվածի:

3. Սահմանել, որ՝

1) յուրաքանչյուր խորհրդի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը.

2) խորհրդի կազմում առնվազն ընդգրկվում են նախարարներ (ներառյալ տվյալ ոլորտների քաղաքականությունը մշակող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմինների ղեկավարները), Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալը կամ նախարարության այլ ներկայացուցիչ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալը կամ նախարարության այլ ներկայացուցիչ և համապատասխան բնագավառի հասարակական կազմակերպությունների կամ այլ գործարար միավորումների առնվազն երկու ներկայացուցիչներ: Սույն կետով նախատեսված բնագավառի հասարակական կազմակերպությունների կամ այլ գործարար միավորումների ներկայացուցիչներին խորհրդում ընդգրկելու նպատակով համապատասխան նախարարությունը ԶԼՄ-ներով և ինտերնետային կայքում հրապարակում է հայտարարություն: Խորհրդում ընդգրկվելու մասին համապատասխան բնագավառի հասարակական կազմակերպությունների կամ այլ գործարար միավորումների դիմումը ներկայացվում է հայտարարությունը հրապարակվելուց հետո երկշաբաթյա ժամկետում: Խորհրդում ընդգրկվում են դիմումն առաջինը ներկայացնողները՝ ըստ հերթականության.

3) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունում ձևավորվում է մեկ խորհուրդ (Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կառավարման խորհուրդ)՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված օրինակելի կանոնադրության համաձայն ծառայության ներքո գործող երեք՝ սննդամթերքի անվտանգության և որակի, բուսասանիտարիայի և անասնաբուժության տեսչությունների կառավարման նպատակով:

4. Հայաստանի Հանրապետությունում ստուգում իրականացնող պետական մարմինների ղեկավարներին, որոնք իրենց կազմում ունեն տեսչություններ՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել իրենց կառուցվածքում գործող տեսչության կառավարման խորհրդի կանոնադրությունը՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված օրինակելի կանոնադրությանը համապատասխան.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանը ներկայացնել իրենց կառուցվածքում գործող տեսչության կառավարման խորհրդի անհատական կազմը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2013 թ. օգոստոսի 13
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
հուլիսի 25-ի N 856-Ն որոշման

ՁԵՎ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ _____ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Հայաստանի Հանրապետության ——————————— նախարարության ——— ————տեսչության կառավարման խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) տեսչության ընդհանուր կառավարման նպատակով ստեղծվող կոլեգիալ մարմին է:

2. Խորհուրդն ստեղծվում և նրա գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

3. Խորհրդի լիազորությունները սահմանվում են օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, սույն կանոնադրությամբ:

4. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

5. Խորհրդին կից գործում է բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ՝ բողոքարկման հանձնաժողով), որն ստեղծվում է տեսչության և նրա աշխատողների գործողությունների կամ անգործության (այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի) դեմ բերված բողոքների քննության և լուծման նպատակով:

6. Բողոքարկման հանձնաժողովը խորհրդի կողմից ձևավորվող մարմին է, որը բաղկացած է նախագահից և վեց անդամից, որոնք իրենց աշխատանքը հանձնաժողովում իրականացնում են հասարակական հիմունքներով: Բողոքարկման հանձնաժողովի կազմում չի կարող ընդգրկվել տվյալ տեսչության աշխատող:

7. Բողոքարկման հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցել են հանձնաժողովի առնվազն 5 անդամ: Հանձնաժողովի անդամները քվեարկում են կողմ կամ դեմ: Որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

8. Բողոքարկման հանձնաժողովին դիմում-բողոք ներկայացրած անձը համապատասխան նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին նիստից առնվազն մեկ օր առաջ ծանուցվում է փոստի կամ էլեկտրոնային փոստի միջոցով: Բողոքարկման հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել դիմում-բողոք ներկայացրած անձը և (կամ) վերջինիս լիազորած անձը (մասնագետը): Դիմում-բողոքները տեսչության կողմից քննության են առնվում, և դրանց վերաբերյալ որոշումներ են ընդունվում 30 օրվա ընթացքում: Լրացուցիչ ուսումնասիրություններ պահանջող դեպքերում տեսչության ղեկավարի որոշմամբ նշված ժամկետը կարող է երկարաձգվել 15 օրով, ինչի մասին իրազեկվում է դիմումատուն: Բողոքարկման հանձնաժողովի նիստի ավարտից հետո բողոքարկման հանձնաժողովը դիմում-բողոքը ներկայացնողին ուղարկում է դիմում-բողոքի վերաբերյալ հանձնաժողովի ընդունած որոշումը:

9. Բողոքարկման հանձնաժողովի աշխատակարգը, բողոքարկման հանձնաժողովին դիմում-բողոք ներկայացրած անձին նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձևը հաստատում է խորհուրդը:

10. Խորհրդի գործունեության նպատակն է ապահովել տեսչության գործունեության արդյունավետությունը և նպաստել ոլորտի անվտանգության ապահովմանը:

11. Խորհրդի լիազորություններն են՝

1) տեսչության գործունեության և իրականացվող ստուգումների տարեկան ծրագրերին հավանություն տալը.

2) ստուգումներին առնչվող ուղեցույցներին հավանություն տալը.

3) տեսչության պետի կողմից ներկայացված տեսչության տարեկան և ընթացիկ հաշվետվություններին հավանություն տալը.

4) տեսչության պետի կողմից ներկայացված՝ կիրառված պատասխանատվության միջոցների մասին հաշվետվություններին հավանություն տալը.

5) յուրաքանչյուր տարի սահմանում է նախատեսված ռազմավարական խնդիրների իրագործմանն ուղղված տեսչական մարմնի գործունեության թիրախներ, որոնք ներառում են՝

ա. տեսչության կողմից վերահսկման ենթակա ոլորտը կարգավորող նորմերին և պահանջներին ամբողջությամբ համապատասխանող տնտեսավարող սուբյեկտների (այսուհետ՝ ամբողջությամբ համապատասխանող տնտեսավարող սուբյեկտներ) թվի աճ,

բ. տեսչության կողմից վերահսկման ենթակա ոլորտում հանրությանն սպառնացող ռիսկերի կրճատում,

գ. տեսչության կատարողականի և գործունեության մասին հանրության իրազեկվածության բարձրացում.

6) հավանություն է տալիս տեսչության պետի կողմից ներկայացված կատարողականի ցուցանիշների ցանկին, որոնցով նախատեսված է գնահատել տեսչության կողմից իր խնդիրների իրագործումը: Խորհուրդը կարող է մերժել ցանկում ներառված ցուցանիշները կամ նպատակահարմար գտնելու դեպքում՝ ավելացնել այլ ցուցանիշներ: Խորհրդի կողմից հաստատված ցանկը պետք է ներառի հետևյալ ցուցանիշները՝

ա. հաշվետու ժամանակաշրջանում պլանավորված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների հարաբերակցություն,

բ. տեսչության կողմից վերահսկման ենթակա ոլորտը կարգավորող նորմերին և պահանջներին համապատասխանող տնտեսավարող սուբյեկտների քանակ,

գ. ստուգման կամ դրա ավարտից հետո վերացված խախտումների քանակ,

դ. հայտնաբերված և դատական կարգով լուծված խախտումների քանակ,

ե. տեսչության կողմից վերահսկման ենթակա տնտեսավարող սուբյեկտներին տրված ուղեցույցների քանակ:

12. Յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10-օրյա ժամկետում տեսչությունը խորհրդին ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ ընթացիկ եռամսյակային հաշվետվություններ, որոնք խորհուրդը համադրում է կատարողականի ցուցանիշների և սահմանված տարեկան թիրախների կատարողականի հետ: Սահմանված ցուցանիշներին կամ թիրախներին չբավարարելու դեպքում խորհուրդը կարող է տեսչությանը տալ կատարողականի բարելավմանն ուղղված ցուցումներ:

13. Սույն կանոնադրության 12-րդ կետի իմաստով՝ տնտեսավարող սուբյեկտը համարվում է համապատասխանող, եթե համապատասխանում է ստուգաթերթի ռիսկայնության միավորների առնվազն 80 տոկոսին բաժին ընկնող հարցերին:

14. Խորհուրդն իր նիստերը հրավիրում է առնվազն յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ:

15. Խորհուրդը հաշվետու է Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Հայաստանի Հանրապետության վարչապետին:

16. Խորհրդի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը, իսկ աշխատակարգը՝ խորհուրդը:

17. Խորհրդի քարտուղարությունն իրականացվում է տեսչության կանոնադրությամբ սահմանված կարգի համաձայն:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Վ. Գաբրիելյան**